

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ԱՄՀ-Ի ՓՈԽ-ՆԱԽԱԳԱՀ ԱՆՎԱՐ ՍԱԴԱԹԻՆ՝ ԱՄՀ-Ի ՆԱԽԱԳԱՀ ԳԱՄԱԼ ԱԲԴԵԼ ՆԱՍԵՐԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ

Կահիրե

Հայաստանյայց սուրբ եկեղեցու և համայն հայ հավատացյալների անունից խորը վշտով հայտնում ենք Ձեզ Մեր ցավակցությունները և աղոթում, որպեսզի Աստված հավիտենական լույս և խաղաղություն շնորհի ձեր քաջարի նախագահ Գամալ Աբդել Նասերի հոգուն՝ միշտ փառքի մեջ պահելով ձեր պատմական հրաշալի երկիրը և արաբ ազնիվ ժողովրդին։

Օրհնությամբ՝

**ՎԱԶԳԵՆ Ա**
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

30 ը սեպտեմբերի 1970 թ.,
Ս. Էջմիածին